ՈՍԿԱՆ.– Սուս կաց:

ՆԱԶԱՐ.– (Սպառնագին եւ սարսափած) Հե՛ե՛ե՛ե՛եպ…

ՍԱՔՈ.– (Արագ) Յիսո՛ւս-Քրիստոս… Յիսո՛ւս-Քրիստոս, Յիսո՛ւս-Քրիստոս…

ՆԱԶԱՐ.– Բըմբուլնե՛րդ կթռցնեմ երկինք, հա՛: (Լռութիւն:) Էլի մարդ կա: Դալի-Ասլան, Էն կուռը բռնի: Գիջա-Ղուշի, Է՛ս կուռը: Է՛ս Է՝ նստում եմ ձիս:

ՍԱՔՈ.– Ո՛սկան, փախչենք…

ՈՍԿԱՆ.– Ո՞ւր, ճամփան կտրել են:

ՆԱԶԱՐ.– Նստեցի: Եկա՛: Քարուան-Ղռան, հասի: Ջամո՛ւշ–Պատռան, խփի՛: Բռնեցե՛ք… էհե՛յ… ջարդուբո՛ւրդ կանեմ: (Վազում է դէպի աջ, նախաբեմ: Ոսկանը մտնում է թփերի արանքը: Սաքոն դուրս է վազում թփերից եւ մնում շփոթուած: Նազարը գալիս է, դիպչում Սաքոյին եւ ցած ընկնելով սկսում է սառռալ) Հը՛ը՛ մմը՛ը՛մը՛…

ՍԱՔՈ.– Հը՛ ը՛ մմ ը՛մը՛ մը՛… Քաջ Նազա՛ր…

ՆԱԶԱՐ.– Քեռօղլի՛…

ՍԱՔՈ.– (Փաթաթւում է Նազարի մէջքին եւ գոռում) էհե՛յ…

ՆԱԶԱՐ.– (Նոյնպէս փաթաթւում է Սաքոյի մէջքին եւ գոռում): էհե՛յ…

ՍԱՔՈ.– (Գոռում է) Բա՛ց թող…

ՆԱԶԱՐ.– (Գոռում է) Բա՛ց թող… (Երկուսն էլ հանկարծ իրար բաց են թողնում եւ փախչում. Նազարը՝ ձախ, դէպի տան հետեւը, Սաքոն՝ աջ, թփերի մէջ:)

ՈՍԿԱՆ.– (Թփերից դուրս գալով) Սաքո՛, ճղի՛… (Վազում է աջ կողմը:)

ՍԱՔՈ.– Ա՛ման, սո՛ւրբ մայր աստուածածին: (Վազում է նրա հետեւից:)

Լռութիւն:

ՆԱԶԱՐ.– (Բերանքսիվար տափկում է գետնին, Ոսկանն ու Սաքոն նրա վրայով վազում են դէպի աջ եւ անհետանում: Նազարը դեռ պառկած է, ապա հետզհետէ վեր է կենում: Ապա սկսում է դիտել Սաքոյի ձիուն: Մի քիչ վստահ) Հը՞, անտէ՞ր, տէրդ կորցրե՞ց ինձ, թե՞ էլի գալու է: (Լռութիւն:) Չէ՛, չի՛ երեւում…Փախա՛ւ, ի՞նչ արաւ… կլնի որ փախաւ… (Վստահ) Հը՛ ո՞վ է ասում թէ քաջ չեմ, (Գոռում է) էհե՛յ, մի՞ն զարկեմ, հազա՛ր կջարդեմ: (Մօտենալով դռանը) Ուստիան, դուռը բաց: (Լռութիւն:) Է, սրանից դենը հերն անիծած էն տղամարդու, որ կնիկ մարդու անունը տա: Ես գնացի: Էհեյ, ճամփա տուէք, խաբարդա՛: Քաջ Նազարն եկա՛ւ: (Ականջ է դնում: Ուստիանը լուռ է): Լա՛ւ, մնա՛, լուսը բացուի, մի շնաթակ տամ քեզ՝ յետոյ կերթամ: (Լռութիւն) Շա՛ն կնիկ, գնա՛ցի: (Նստում է ձին) էհե՛յ…